Պայմանագիր ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/68-Պ

ք. Երևան

02.11.2022թ.

«ԷԳԱ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Թ. Հակոբյանի, այսուհետ Կատարող, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ Պատվիրատու, մյուս կողմից,

երկուսը միասին այսուհետ նաև Կողմեր,
կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն պատվիրում է, իսկ Կատարողը պարտավորվում է մատուցել Պատվիրատուին գովազդային (արտաքին գովազդի) ծառայություններ՝ համաձայն սույն Պայմանագրով նախատեսված պայմանների, իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել Կատարողին մատուցված ծառայությունների դիմաց:

1.2. Ծառայությունները մատուցվում են 2022 թվականի նոյեմբերի 11-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 11-ը ներառյալ:

2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կատարողը պարտավորվում է.

2.1.1 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցել պատշաճ որակով,

2.1.2 Մատուցել գովազդային ծառայություններ՝ տպագրել, տեղադրել, ապամոնտաժել և կատարել գովազդի ամբողջությունն ապահովելու հետ կապված բոլոր ընթացիկ տեխնիկական սպասարկման աշխատանքները՝ համաձայն սույն պայմանագրի և նրան կից հավելվածների,

2.1.3 Գովազդային պաստառների վնասման դեպքում իր ուժերով անհապաղ վերականգնել վնասված գովազդային պաստառը,

2.1.4Պայմանագրի գործողության ավարտից հետո իր ուժերով ապամոնտաժել տեղադրված գովազդը, ինչի համար Պատվիրատուն որևէ հավելյալ վճարում չի կատարում,

2.1.5 Անհապաղ վերացնել Պատվիրատուի կողմից Գովազդի տարածման ծառայություններում հայտնաբերված թերությունները,

2.1.6 Պայմանագիրը կնքելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաև Պայմանագրի գործողության ողջ ընթացքում՝ ըստ Պատվիրատուի պահանջի ներկայացնել Պատվիրատուին ՀՀ, քաղաք Երևանում (անհրաժեշտության պարագայում նաև ՀՀ մարզերում) արտաքին գովազդի բիլբորդերների կամ այլ արտաքին գովազդի տեղադրման վայրերի վերաբերյալ Կատարողի ունեցած թույլտվությունները:

2.2. Կատարողն իրավունք ունի.

2.2.1. Պատվիրատուից պահանջել ժամանակին կատարելու սույն պայմանագրով սահմանված վճարումները:

2.2.2. Վճարման ժամկետները խախտելու դեպքում Կատարողը կարող է հաշվարկել տույժ, Պատվիրատուի կողմից վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար՝ չվճարված գումարի 0.1%-ի չափով, բայց ոչ ավել, քան Պայմանագրի ընդհանուր արժեքի 5 (հինգ) տոկոսը:

2.3. Պատվիրատուն պարտավոր է.

2.3.1. Առնվազն 3 (երեք) օր առաջ՝ մինչև Ծառայության մատուցումը, տրամադրել Կատարողին վերջինիս հետ նախապես համաձայնեցված ձևաչափով գովազդային նյութը:

2.3.2. Սույն պայմանագրի համաձայն ապահովել ծառայությունների վճարը՝ համաձայն պայմանագրի և նրան կից հավելվածների:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի.

2.4.1. Կատարողից պահանջել պատշաճ կատարել սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները:

2.4.2. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը՝ պահանջելով տրամադրել Ծառայությունների մատուցման ընթացքի և որակի վերաբերյալ Պատվիրատուին հետաքրքրող տեղեկատվությունը,

2.4.3. Պահանջել Կատարողից աջակցել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս, ինչպես նաև մատուցված Ծառայությունների արդյունքն ընդունելիս,

2.4.4. Սույն Պայմանագրով իր ակնկալած արդյունքին հասնելու նպատակով Կատարողին տալ Ծառայությունների մատուցմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներ,
2.4.5. Գովազդի տարածման ծառայություններում թերություններ հայտնաբերելու դեպքում առաջարկել Կատարողին անհապաղ վերացնել մատնանշված թերությունները,
2.4.6. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կատարողից պահանջել վճարել տույժ յուրաքանչյուր ուշացման օրվա համար Ծառայությունների մատուցման ընդհանուր արժեքի 0.13 (զրո ամբողջ տասներեք) տոկոսի չափով,
2.4.7.1. Կատարողը թույլ է տվել իր կողմից ստանձնած պայմանագրային պարտականությունների խախտում, և իր կողմից թույլ տված խախտումը վերացնելու մասին ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում չի վերացրել այն,
2.4.7.2. Կատարողը Պայմանագրով սահմանված ժամկետներում չի մատուցել Ծառայությունները կամ դրանց մի մասը,
2.4.7.3. Կատարողն այլ կերպ թույլ է տվել սույն Պայմանագրի էական խախտում:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է 1 181 520 (մեկ միլիոն մեկ հարյուր ութսունմեկ հազար հինգ հարյուր քսան) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ 20%):
3.2. Վճարումը կատարվում է հետևյալ կարգով.
Պայմանագրի ընդհանուր արժեքի 50%-ը որպես կանխավճար՝ մինչև 21 նոյեմբերի 2022թ.-ը,
Պայմանագրի ընդհանուր արժեքի մնացած մասը՝ հանձնման-ընդունման ակտի երկկողմանի հաստատվելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
3.3. Վճարումը կատարվում է վճարման ենթակա գումարը Կատարողի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով: Վճարման օր է համարվում Պատվիրատուի հաշվից Պայմանագրի արժեքի ելքագրման օրը: Բանկային ծախսերը Պատվիրատուի բանկում կրում է Պատվիրատուն, իսկ Կատարողի բանկում՝ Կատարողը

4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ավարտից հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը:
4.2. Հանձնման-ընդունման ակտը ներկայացնելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն Կատարողի աջակցությամբ ստուգում է մատուցված Ծառայությունների որակը և ծավալը, և առարկությունների բացակայության դեպքում հաստատում հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը: Ընդ որում, սույն Պայմանագրի շրջանակներում հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի հաստատման օր է համարվում դրանց վրա Կողմերից վերջինի ստորագրության (կնիքի առկայության դեպքում նաև կնքման) օրը:
4.3. Այն դեպքում, երբ մատուցված Ծառայություններում հայտնաբերվում են թերություններ, Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում Կատարողին գրավոր ներկայացնում է հանձնման-ընդունման ակտը չհաստատելու հիմնավորում՝ նշելով մատուցված Ծառայություններում հայտնաբերված թերությունները և սահմանելով դրանց վերացման ողջամիտ ժամկետ կամ սույն Պայմանագրի 2.4.7. կետով սահմանված կարգով միակողմանի լուծում է Պայմանագիրը:
4.4. Այն դեպքում, եթե Պատվիրատուն սույն Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում չի հաստատում հանձնման-ընդունման ակտը և Կատարողին չի ներկայացնում դրա հիմնավորումը, ապա հանձնման-ընդունման ակտը համարվում է հաստատված Պատվիրատուին ներկայացնելու ամսաթվով:

5.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում պայմանագիրը ստորագրելու օրվանից և գործում է մինչև կողմերի պարտավորությունների կատարման ավարտը:
5.2. Կողմերը իրավունք ունեն միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը , այդ մասին գրավոր տեղեկացնելով մյուս Կողմին ոչ ուշ, քան պայմանագիրը լուծելուց 30 աշխատանքային օր առաջ:

6.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ համաձայն ՀՀ օրենսդրության:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

7.1.Սույն պայմանագրով պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանգիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժերը, ջրհեղեղները, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները , գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց ղեկավարների ակտերը և այլն, որոնք անհնար են դարձնումսույն պայամանագով պարտավորությունների կատարումը: Այն կողմը, որի պարտականությունների կատարումը ընդհատվում է այդ պատճառներով պարտավոր է ծանուցել մյուս կողմին պարտականությունների ընդհատման կամ չկատարելու և դրա պատճառների մասին:

7.2. Եթե ՖՈՐՍ-ՄԱԺՈՐԱՅԻՆ իրավիճակը շարունակվում է մեկ ամսից ավել, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, այդ մասին նախապես գրավոր տեղեկացնելով մյուս կողմին: Նման դեպքում կողմերի միջև փոխադարձ վերջնահաշվարկի օր է համարվում պայմանագիրը լուծելու օրը:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1.Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.2. Սույն պայմանագրի հավելվածները, ծառայությունների մատուցումը սկսելու հանձման-ընդունման և վճարումների կարգը հաստատելու մասին ակտը, ինչպես նաև կողմերի համաձայնությամբ պայմանագրում կատարվող փոփոխությունները, լրացումները համապատասխան արձանագրություններով և համաձայնագրերով, կնքված կողմերի կամ իրավասու ներկայացուցիչների կողմից, հանդիսանում են սույն պայմանագրի անբաժան մասը:

8.3. Պատվիրատուի կողմից պայմանագիրը լուծելու մասին առաջարկությունը Պատվիրատուին չի ազատում փաստացի մատուցված Ծառայության մասով վճարման պարտավորություններից:

8.5. Պատվիրատուն պատասխանատվություն է կրում տրամադրվող գովազդվող նյութի իրականությանը համապատասխանող տեղեկատվության համար:

8.6. Պայմանգրի սահմաններում կողմերի միջոցով ներկայցվող գովազդային տեղեկությունների գովազդվող նյութի բովանդակությունը պետք է համապատասխանի <<Գովազդի մասին>> ՀՀ օրենքի պահանջներին:

8.7. Գովազդվող նյութում ներկայացված տեղեկատվության, սույն պայմանագրի 7.5 և 7.6 կետերի պահանջներին, ինչպես նաև դրանցից բխող հետևանքների համար լիարժեք իրավական պատասխանատվություն կրում է Պատվիրատուն:

8.8. Գովազդային վահանակ(ներ)ը պայմանագրի գործունեության ժամանակահատվածում գտնվում (են) է Կատարողի երաշխիքային սպասարկման ներքո:

9.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐՆ ՈՒ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատվիրատու
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
ՀՎՀՀ 01540062
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022082671001

Գորածդիր տնօրեն՝

Հ. Մովսիսյան

Կատարող
«ԷԳԱ» ՍՊԸ
Գործ. հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հ. Քոչար 13
ՀՎՀՀ 00020238
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ2050622021921001

Տնօրեն՝

Թ. Հակոբյան

02.11.2022թ.-ի № ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/68-Պ պայմանագրին կից Ծրագիր
Հավելված N1

ք. Երևան 02.11.2022թ.

- Գովազդային արշավը կատարվում է ըստ հետևյալ ծրագրի.

Հասցե /պաստառի մակերես/	**Կողմ**	**Ժամկետ**	**1 կողմի արժեքը**	**Գումար**	**Ծառայությունների մատուցման ժամանակահատված**
Դավիթ Անհաղթ փողոց /18քմ/	1	1	95400	95400	2022թ-ի նոյեմբերի 11-ից մինչև 2022թ-ի դեկտեմբերի 11-ը
Իսակովի պողոտա /36քմ/	2	1	99000	198000	2022թ-ի նոյեմբերի 11-ից մինչև 2022թ-ի դեկտեմբերի 11-ը
Արշակունյաց փողոց /18քմ/	1	1	99000	99000	2022թ-ի նոյեմբերի 11-ից մինչև 2022թ-ի դեկտեմբերի 11-ը
Բարեկամության հր. /18քմ/	1	1	104400	104400	2022թ-ի նոյեմբերի 11-ից մինչև 2022թ-ի դեկտեմբերի 11-ը
Գայի պողոտա /18քմ/	1	1	99000	99000	2022թ-ի նոյեմբերի 11-ից մինչև 2022թ-ի դեկտեմբերի 11-ը
Կոմիտասի պողոտա /18քմ/	1	1	99000	99000	2022թ-ի նոյեմբերի 11-ից մինչև 2022թ-ի դեկտեմբերի 11-ը
Պաստառի տպագրություն՝ 126 քմ				**289800**	
Ընդամենը				**984600**	
ԱԱՀ 20%				**196920**	
Ընդամենը ներառյալ ԱԱՀ 20%				**1181520**	

Համաձայն 02.11.2022թ.-ի պայմանագրի հավելված N1-ի ընդհանուր գումարը կազմում է **1 181 520** (մեկ միլիոն մեկ հարյուր ութսունմեկ հազար հինգ հարյուր քսան) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ 20%), որը պատվիրատուն պարտավորվում է վճարել պայմանագրով սահմանված կարգով:

Պատվիրատու
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն»
ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
ՀՎՀՀ 01540062
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022082671001

Գործադիր տնօրեն՝

Հ. Մովսիսյան

Կատարող
«ԷԳԱ» ՍՊԸ
Գործ. հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հ. Քոչար 13
ՀՎՀՀ 00020238
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ2050622021921001

Տնօրեն՝

Թ. Հակոբյան

ԷԳԱ ՍՊԸ
Հ Հ.Երևան 375012. Հր.Քոչար 13. բն.13 Հեռ. 270641, 270371. Ֆաքս 270756
egaoutoor@mail.ru , zebraoutdooragency@gmail.com

N	Վարչական շրջան	Հասցե	ԿՈԴ	Գովազդի ուրվանկար	Գովազդային կրիչի չափը (մ)	Գովազդային կրիչի մակերեսը (ՔՄ)	Գովազդի տեղադրման ժամանակաացույց
1	Քանաքեռ Զեյթուն	Դ. Անհաղթի փող.	KZ8	Junior Eurovision	3*6	18	11/11/22թ.-11/12/22թ.
2	Մալաթիա Սեբաստի	Իսակովի պող.	MS16	Junior Eurovision	3*6	18	11/11/22թ.-11/12/22թ.

Համաձայնեցված է
Երևանի քաղաքապետարանի
արտաքին ձևավորման և գովազդի վարչություն

Digitally signed by ZOHRABYAN HOVHANNES
4001880288
Date: 2022.11.04 11:05:31 AMT

N	Վարչական շրջան	Հասցե	ԿՈԴ	Գովազդի ուրվանկար	Գովազդային կրիչի չափը (մ)	Գովազդային կրիչի մակերեսը (ՔՄ)	Գովազդի տեղադրման ժամանակա ցույց
3	Մալաթիա Սեբաստի	Իսակովի պող.	MS25	Junior Eurovision	3*6	18	11/11/22թ.-11/12/22թ.
4	Արաբկիր	Կոմիտասի պող.	AR33	Junior Eurovision	3*6	18	11/11/22թ.-11/12/22թ.
5	Արաբկիր	Բարեկամության հր.	AR57	Junior Eurovision	3*6	18	11/11/22թ.-11/12/22թ.
6	Նոր Նորք	Գայի պողոտա	NN14	Junior Eurovision	3*6	18	11/11/22թ.-11/12/22թ.
7	Շենգավիթ	Արշակունյաց պող	SH16	Junior Eurovision	3*6	18	11/11/22թ.-11/12/22թ.